ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 հունիսի 2017 թվականի N 110-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ԳԱՌՆԻ ԲԱՆԱՎԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանով հաստատված հավելվածի 177-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2012 թվականի դեկտեմբերի 3-ի N 517-Ա որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 59-րդ կետը և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2016 թվականի դեկտեմբերի 30-ի N 333-Ա որոշումը՝ **որոշում եմ.**

1. Ստեղծել աուդիտորական առաջադրանքի աշխատանքային խումբ հետևյալ կազմով և գործուղել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Գառնի բանավանի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն (այսուհետ կազմակերպություն)՝ 2017 թվականի հունիսի 06-ից մինչև հունիսի 09-ը ներառյալ կազմակերպությունում ֆինանսական աուդիտ իրականացնելու նպատակով՝

1) ***Կոմիտաս Հունանյան*** - խմբի ղեկավար, մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ,

2) ***Անահիտ Ստեփանյան*** - անդամ, մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ,

3) ***Արամ Գրիգորյան*** - անդամ, մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ,

4) ***Արգամ Առաքելյան*** - անդամ, մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ,

5) ***Արմեն Վարդանյան*** - անդամ, մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ,

6) ***Կարեն Հունանյան*** - անդամ, մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ:

2. Աուդիտորական խմբին՝ աուդիտորական առաջադրանքը իրականացնել 2014-2016 թվականների համար ներկայացված ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության

և դրանց կիրառելի հիմունքներին համապատասխանության, կատարված փաստացի և դրամարկղային ծախսերի հիմնավորվածության, միավորի հաշվեկշռում գտնվող գույքի (տարածքի) վարձակալությամբ տրամադրման, վարձավճարների հաշվարկման և գանձման գործընթացների, կազմակերպության կողմից լիազոր մարմնին ներկայացված կոմպլեկտավորման վերաբերյալ տվյալների հավաստիության, կազմակերպության ակտիվների և պարտավորությունների ամենամյա գույքագրման գործընթացի, գնման ընթացակարգերի արձանագրություններում տեղ գտած տեղեկությունների, պայմանագրով կողմերի ստանձնած պարտավորությունների պայմանագրին համապատասխանության, աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների հաշվարկման և վճարման գործընթացի գնահատման նպատակով, տնօրենի կողմից ընդունված իրավական ակտերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ուսումնական հաստատության գործունեության համապատասխանությունը հանրակրթության ոլորտի իրավական ակտերին, կազմակերպության աշխատողների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված անձնական գործերի վարման, զբաղեցրած պաշտոններին համապատասխանության ուսումնասիրություններ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2017 թվականի հունիսի 01
ք. Հրազդան